Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 16. ԱՊՐԻԼԻ 2015 Թ> ԹԻՎ 100-Լ ՀՐԱՄԱՆԻՑ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ, ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 03.08.2006 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 86-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մի շարք դեպքերում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պատասխանատու հերթապահների կողմից քրեակատարողական հիմնարկներում տեղի ունեցած արտակարգ դեպքերի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պահպանության բաժնի հերթապահության բաժանմունք (այսուհետ՝ Հերթապահության բաժանմունք) օպերատիվ հաղորդագրությունները ներկայացվում են ուշացումով և թերի ձևակերպմամբ, ինչը որոշ դեպքերում հետևանք է նաև ոլորտի ոչ ամբողջական կարգավորումների:

Ելնելով խնդրո առարկայի կարևորությունից և ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պետերին՝

ա) ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործությունների, կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից ինքնավնասման, արգելված իրերի ներթափանցման, կալանավորված անձանց և դատապարտյալներին քաղաքացիական բուժական հիմնարկներ կամ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու, կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից հացադուլ հայտարարելու, կալանավորված անձանց և դատապարտյալներին կարճաժամկետ մեկնում տրամադրելու, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 186-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, ինչպես նաև քրեակատարողական հիմարկների բնականոն գործունեությունը խաթարող այլ արտակարգ իրավիճակների վերաբերյալ (հոսանքազրկման դեպքերի, հրդեհների, տեխնիկական խափանումների, կենցաղային ապահովման պայմանների խաթարման և այլն) օպերատիվ հաղորդագրությունները հեռախոսակապի միջոցով Հերթապահության բաժանմունք հայտնել ***ոչ ուշ քան դեպքին հաջորդող 30 րոպեի ընթացքում,***

բ) ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ պարունակող դեպքերի վերաբերյալ սույն հրամանի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված կարգով օպերատիվ հաղորդագրության տեսքով տեղեկություններ հայտնելուց բացի, ***ոչ ուշ քան դեպքին հաջորդող աշխատանքային օրը,*** ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ընդհանուր բաժին ներկայացնել նաև գրավոր հաղորդագրություն՝ նշելով դեպքի հանգամանքներն ու ձեռնարկված միջոցառումները,

գ) Սույն հրամանի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսված մյուս դեպքերի վերաբերյալ գրավոր հաղորդագրությունները, ***ոչ ուշ քան հաջորդող ամսվա 3-րդ աշխատանքային օրը***, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ընդհանուր բաժին ներկայացնել ***ամսեկան կրտվածքով*** ամփոփ աղյուսակների տեսքով՝ առանձին-

առանձին նշելով դեպքերի քանակի և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ,

դ) անձնական պատասխանատվությամբ հսկել սույն հրամանի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերի պահանջների պատշաճ կատարման, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ընդհանուր բաժին առաքվող օպերատիվ հաղորդագրությունների լրիվության և գրագետ կազմման նկատմամբ:

2. Հերթապահության բաժանմունքի պետին՝

- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից սույն հրամանի 1-ին կետի «ա» ենթակետում նշված դեպքերի վերաբերյալ հեռախոսակապի միջոցով ստացված օպերատիվ հաղորդագրությունների վերաբերյալ անհապաղ զեկուցել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետին, առաջին տեղակալին և տեղակալներին:

3. Սույն հրամանի 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ անմիջական հսկողությունը հանձնարարել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների պետերին և պատասխանատու հերթապահներին:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ ընդհանուր վերահսկողությունը հանձնարարել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի առաջին տեղակալին և տեղակալներին՝ ըստ համակարգման ոլորտների:

5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 86-Լ հրամանը:

6. Հրամանը ծանոթացնել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների և քրեակատարողական հիմնարկների ծառայողներին:

7. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ԱՐԹՈՒՐ ՕՍԻԿՅԱՆ

Իսկական է՝
Ծիրեր Դ. Դարբինյան